ւորն զի ապրեցուսցէ. և սպասաւորք և դռնապանք վէզիրին ասելով նոցա պատասխանին թէ Ոչ գոյ վէզիրն աստ, փակելով զդրունսն առաջի նոցա։ Եւ նոքա զայն տեսեալ՝ սկսին հարկանել զդուռն կացնաւ և ծակոտեալ զպատն և ընկեցեալ զդուռն, մտեալ ի ներս այսքան ամբոխս՝ խողխողելով զարսն որ անդն կային, և ի վեր ելեալ բացին՝ ոմանք զգանձատունն, առնելով ցիր և ցան զանհամար քսակսն արծաթի. ոմանք կտրատէին և ոմանք ողջ վեր առնէին, և ըզմուշտակսն ծանրագին՝ զսամուրսն և զայլսն ծիւ ծիւ արարեալ. և զոսկէզօծ զէնքն և զոսկէթել պաճուճանքն և զականակուռ երեսանակալք ձիոցն և զապրշումեղէնս և զկտաւս, որոց կտոր կտոր արկեալ ի ձեռս և զօրեղիցն ողջ, և զպղնձեղէնսն և զձիս պերճաւորս պիտանիս թագաւորաց բազում էր առնա, քանզի ձիասէր էր յոյժ. զամենեսեան առեալ գնային. զի այնպէս արարին՝ որպէս զանապատ. քանզի և մտեալ ի սահմանս կանանց՝ անդ և որպէս զիտացին այնպէս արարին։ Բայց սուլթանն ելս յառաջագոյն փախեալ էր յայլ տեղիս, զի և նորա ևս ունէին ի մտի՝ եթէ կալցին։ Եւ զայս արարեալ՝ մինչև յաւելն ոչ թողին. զարձան և էր երեկոյ։ Եւ գնացեալ նոյն զինուքն ի ժամադրեալ տեղն որ ասի Էթմէյտան, մինչ ի լուսանալ առաւօտուն՝ անդ նստեալ վրանօք։

Եւ առաւօտուս Գշի որ մուտն էր Մայիսի, գնացին նոյն զինուք բազմացուցեալ զամբոխն, թէ ոք չկայր յերեկի օրն այնմ կապուտի որք առին, այսօր հաւաքեալ ի մի եթէ այնպիսի բանի հանդիպեսցին։ Եւ գնացին ի պալատ թագաւորին եթէ Տո՛ւր զթշնամին քո և մեր ի ձեռս մեր. և ամենեքեան մեծամեծքն և վուզարայքն ի ներսն էին ի պալատն արքունի առ վէզիրն, և թէ ձայնն սաստկանայր. որք